

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

**21.01.2011թ. նիստին**

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Ա.Շաբոյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ս. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Մարկոսյանը:

### **Նիստում լսվեց հետևյալ հարցը.**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

### **Որոշվեց՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

**04.02.2011թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու.Պողոսյան, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ Ա. Հակոբյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ս. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Մարկոսյանը:

**Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի 2010 թվականի հաշվեկշիռները՝ ըստ ծրագրերի հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2010 թվականի հաշվեկշիռները՝ ըստ ծրագրերի:

*/Անհատական/*

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների ըստ հայցվողի ցուցանիշների կտրվածքով բազան Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնին տրամադրելու թույլտվության մասին » հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշվեց՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների ըստ հայցվողի ցուցանիշների կտրվածքով բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

**28.02.2011թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Ա.Շաբոյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ.Հովսեփյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պետրոսյանը:

**Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1. «2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել 2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

*/Անհատական/*

2. «Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվառման կարգերում փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ. Պեդրոսյան/*

**Որոշվեց՝**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 23.12.2009թ. թիվ 49-Ա որոշմամբ հաստատված «Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվառման կարգ»-ում կատարել փոփոխություններ:

*/Անհատական/*

3. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի հունիսի 2-ի թիվ 17-Ա որոշումն ուժը կորցնելու և «Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման վերաբերյալ» հարցը:

*/Զեկուցող՝ Լ. Պեդրոսյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված իրական հատվածի (ազգային հաշիվներ, սպառողական և արտադրանքի ինդեքսներ, արտադրության ինդեքս, զբաղվածության, գործազրկության, աշխատավարձ) և արտաքին հատվածի (վճարային հաշվեկշիռ, արտաքին առևտուր, արտաքին պարտք, միջազգային ներդրումային դիրք), սոցիալ-ժողովրդագրական բնույթի տվյալների (բնակչություն) մեթատվյալների խմբերը՝ համաձայն հավելվածի և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի հունիսի 2-ի «Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման վերաբերյալ թիվ 17-Ա որոշումը:

*/Անհատական/*